ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԴԱՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

07 դեկտեմբերի 2012 թվականի N 22 -Ն

գ. Դարակերտ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱՐԱԿԵՐՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2012Թ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16 հոդվածի 18-րդ և 19-րդ կետերի պահանջներով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Սահմանել՝ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դարակերտ գյուղական համայնքի վարչական տարածքում 2013 թ. տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն N 3 հավելվածի:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

Կողմ դեմ ձեռնպահ

Տ. Խոդեղանյան
Գ. Միրզոյան
Ա. Վարդանյան
Ա. Սիմոնյան
Գ. Կարապետյան
Գ. Ավետյան
Հ. Կիրակոսյան

ԴԱՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ղ.ՍԻՄՈՆՅԱՆ

07 դեկտեմբերի 2012թ
գ.Դարակերտ

Հավելված 03
ՀՀ Արարատի մարզի Դարակերտ
համայնքի ավագանու 2012 թվականի
դեկեմբերի 07-ի 08 նիստի 22 – Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրք սահմանել՝

1) հիմնական օբյեկտների համար՝

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական, բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7500 դրամ

2) սույն կետի 1-ին ենթակետի ,,ա,, պարբերությամբ չնախատեսված օբյեկտների համար

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15 000 դրամ,

բ. 501- ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25 000 դրամ,

գ. 1001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 35 000 դրամ.

3) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 դրամ,

բ. 20 և ավելի ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500 դրամ.

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման,արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1500 դրամ

2) բացի օբյեկտի վերակառուցման , ուժեղացման , վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի

գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն,ապա, բացի սույն ակտի
1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա)
շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում է նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝ 2500 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանել՝

1) ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 6250 դրամ:

2) Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝
յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 6250 դրամ:

5. Համայնքի տարածքում տեղական տուրք սահմանել՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ

2) Հեղուկ վառելիքի և սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 200 000 դրամ;

6. Համայնքի տարածքում առևտրի , հանրային սննդի, զվարճանքի,շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները /սաունաները/, խաղատները ժամը 24 .00 –ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիք տարվա համար սահմանվում է՝

1) առևտրի օբյեկտների համար 25 000 դրամ
2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000 դրամ
3) բաղնիքների /սաունաների/ համար՝ 200 000 դրամ
4) խաղատների կազմակերպման համար՝ 500 000 դրամ
5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000 դրամ
6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000 դրամ

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի համար տեղական տուրքը սահմանվում է՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ

2) թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար 2500 դրամ

3) այլ արտաքին գովազդի համար 500 դրամ

4) դատարկ գովազդային վահանակների համար 700 դրամ

8 . Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 1000 դրամ:

9. Համայնքի տարածքում մարդատար տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիք տարվա համար սահմանվում է 5000 դրամ

Տ ե ղ ա կ ան վ ճ ա ր ն ե ր

10. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարը սահմանել 5000 դրամ

11. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարը սահմանել 3000 դրամ

12. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝մասնակցներից վճար սահմանել՝ 3000 դրամ:

13. Համայնքի տարածքում բոլոր վճարողների համար սահմանել տեղական վճարների միասնական դրույքաչափեր:

ԴԱՐԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է. ՄԿՐՏՉՅԱՆ

07. դեկտեմբերի . 2012թ
գ.Դարակերտ